

Փարպեցիի առ Վահան իր գրած թուղթին այն հատուածը թէ՛ «կրեւորով ի խաղու դարկանելիս (գորդ) ձեր զկնի ձեր»։ 1860ական թիւերուն M. Dalerac կը վկայէ որ Եւրոպական Թուրքիոյ փաշայ մը «մարդ մը ունի՝ որ յատկապէս իր աղօթելու գորդը կը կրէ»⁽⁵⁵⁾։ Նոյնիսկ 1835ին W. K. Stuart կը յիշէ որ իրենց Խոյ մուտքին առնէն նահանգապետ Հաճի Հաթիմ Խանի կ'ընկերանային ի միջի այլոց՝ նաեւ «գորդ սըփուռողներ»⁽⁵⁶⁾։

Պարսկաստանի «Ֆէրաշները» նախապէս գորդ սփռողներ եղած ըլլալու են, ինչպէս որ բառը կը թարգմանուի։

Գորդը թէեւ հաղուադէպօրէն նշանակուած է նաեւ ժառանգական նիւթ հայ մեծատան մօտ։ Մեկիք Շահնաղարի մահունէն վերջ անոր Զումշուդ որդին կը ժառանգէ մեծ հարստութիւն եւ գորգեր։ «Շուշու տան մէջ բոլոր սենյակներն զարդարված էին, ըստ սովորութեան խալիկներով (գորդ), ոմուսնաթ՝ քեչաներով (ուղտաբրդէ թաղիք) խորասանի գորգերով»⁽⁵⁷⁾։

ԳՈՐԳԵՐՈՒ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԵՋ ԵՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄՕՏ

Դատելով գորգերու մէջ նախաքրիստոնէական հայ կրօնական արուեստի եւ ներշնչումներու հետքեր, կ'ենթադրեմ որ գորդին գործածութիւնը հայ մեհեաններուն մէջ ընդունելի կարծիք մըն է։ Ասոր համար կարեւոր տուեալ է այն՝ որ հազիւ թէ Քրիստոնէութիւնը հայոց մէջ ընդունուած, ըստ Փաւստոսի վկայութեան, գորգեր կային հայ տաճարներուն (ճաշասրահներուն) մէջ։ Ան կը վկայէ որ Յ47ին Տարօնի Աշտիշատ մեհեանական նշանաւոր դիւղին Լուսաւորչաէն եկեղեցիին կամ եպիսկոպոսարանին մէջ կային գորգեր, որունց վրայ Պապ եւ Աթանաղինէս Լուսաւորչի երկուորեակ թոռները շուայտ խընձոյք մը սարքեցին, «ըմպէին անդ զինի բողօք եւ վարձակօք եւ գուսանօք եւ կատակօք. զսուրբ եւ գնուիրեալ տեղօքն քամահեալ՝ կոխան առնէին»։

«Եւ մինչ էին յուրախութեան մեծի, բազմեալք էին ի ներքս եպիսկոպոսանոցին ուտէին եւ ըմպէին, յանկարծակի հրեշտակ տեսնէր եւեցաւ ի նմանութիւն փայլատական, եւ հարեալ սատակէր զերկոսեան զեղբարսն միանգամայն ի բազմականին անդ։ Եւ այլ մարդիկն՝ որք էին անդ. որք տաճարակիցք էին ուրախակիցք եւ բազմականակիցք էին, որք միանգամ անդ զիպեցան. առ հասարակ թողին եւ փախեան, եւ ելին արտաքս ի տաճարէ։... Եւ Պապն եւ Աթանաղինէս երկուքեան

(55) Secret History of the reign of John Sobiesky the III. — London, 1700, p. 193.

(56) Journal. London, 1854, p. 128.

(57) Խօջապահան Կապիտալ. — Լէօ, 1934, էջ 169։